



Շնորհիվ ԵԱՀԿ ներկայացուցչության՝ Սյունիքի մարզը մասնակից կդառնա Եվրոպական ֆիլմերի փառատոնին

ԿԱՊԱՆ, 23 նոյեմբերի 2007թ. – Կապանում ԵԱՀԿ ներկայացուցչության աջակցությամբ կազմակերպված կինոփառատոնը եվրոպական և ազգային վերջին ֆիլմերը դիտելու հնարավորություն կընձեռի Սյունիքի հեռավոր մարզի բնակչությանը:

«Եվրոպական ֆիլմերի փառատոնի կազմակերպումը Կապանում գերազանց հնարավորություն է՝ եվրոպական կինոյի գանձերը բացահայտելու և վերագտնելու Հայաստանի հեռավոր շրջանում: Այն ընդլայնում է երկխոսության սահմանները և ներառում մարդկանց միջմշակութային փոխանակման գործընթացում: Ես հուսով եմ՝ կշարունակենք այս խրախուսիչ ավանդույթը», - ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինոսը կինոփառատոնի կապակցությամբ Կապան կատարած իր այցի ժամանակ:

Եվրոպական կինոփառատոնի շրջանակներում կէկրանավորվի ինը ֆիլմ՝ հիմնված իրական կյանքից դեպքերի վրա, որոնք առնչվում են միգրացիայի, էթնիկ հանդուրժողականության և հայ հանրության համար հետաքրքրական այլ թեմաների: Յուրաքանչյուր եվրոպական ֆիլմից առաջ ցուցադրվող հայկական կարճամետրաժ ֆիլմերի նպատակն է ներկայացնել վերջին ձեռքբերումները ազգային կինոմատոգրաֆում:

Առաքելությունը աջակցում է փառատոնին և հավատացած է, որ այն խրախուսում է մշակութային փոխանակումը Հայաստանի և եվրոպական ընտանիքի մյուս անդամների միջև և կլրացնի մշակութային բացը մայրաքաղաքի և շրջանների միջև:

Եվրոպական կինոփառատոնը արդեն երկրորդ հաջորդական տարին է՝ կազմակերպվում է ԵԱՀԿ աջակցությամբ՝ Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Ռումինիայի, Նիդերլանդների, Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի դեսպանությունների, Հայաստանում Բրիտանական խորհրդի և Ոսկե Ծիրան միջազգային կինոփառատոնի հետ համատեղ: Փառատոնը կազմակերպվում է նաև մայրաքաղաք Երևանում նոյեմբերի 21-27-ը և Գյումրիում՝ Շիրակի մարզում նոյեմբերի 22-25-ը:

Այս տարի ցուցադրվող ֆիլմերն են՝ «Գժոված քույրերը», «Գիլյոտին» (Ֆրանսիա), «Արևմուտք» (Ռումինիա), «Մեկ օր Եվրոպայում», «Իններորդ օրը» (Գերմանիա), «Թագուհին» (Մեծ Բրիտանիա), «Նոր աշխարհ» (Իտալիա), «Սպասավորը» (Նիդերլանդներ), «Գարնանամուտ» (Լեհաստան):